

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի ռեկտորի 26.12.2016 թ. թիվ

1087 Լ/Կ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 22.12.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 6 26.06.2018թ.

Առ 06.03.2019թ. փոփոխություններով

Վանաձոր 2016թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանում է Համալսարանի ֆակուլտետի դեկանի (այսուհետ նաև՝ դեկան) պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրության անցկացման և դեկանին պաշտոնում հրամանագրման կարգը:
2. Ընթացակարգի ընդունման իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և Համալսարանի ներքին իրավական ակտերը:
3. Ֆակուլտետի գործունեությունը իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ Համալսարանի կանոնադրությանը, Համալսարանի ներքին իրավական ակտերին ու ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:
4. Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել տվյալ ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներից որևիցե մեկում ընդգրկված առնվազն հինգ տարի անընդմեջ գիտամանկավարժական աշխատանքային ստաժ ունեցող գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող յուրաքանչյուր անձ:
4. Դեկանն ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում (այսուհետ նաև՝ Գիտխորհուրդ)՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:
5. Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք: Ֆակուլտետի դեկանը չի կարող զբաղեցնել այլ վարչական պաշտոն:

II. ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

6. Դեկանի ընտրությունը նշանակվում է ռեկտորի հրամանով՝ մինչև գործող դեկանի լիազորությունների ժամկետի լրանալը առնվազն մեկ ամիս առաջ: Այդ մասին հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Համալսարանի ինտերնետային կայքէջում:
7. Դեկանի պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների (ամբիոնների, գիտական լաբորատորիաների) կողմից, պրոֆեսորադասախոսական կազմի յուրաքանչյուր անդամի կողմից կամ ինքնառաջադրմամբ: Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է ընտրություններից 10 օր առաջ:

8. Դեկանի թափուր պաշտոնի համար դիմող անձինք Համալսարանում գործող գործավարության կարգին համապատասխան՝ փակ ծրարով ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
- ա. ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ նիստի արձանագրության հիման վրա կազմված համապատասխան որոշումը, ինքնաառաջարկման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմում.
 - բ. կադրերի հաշվառման անձնական թերթիկ.
 - գ. ինքնակենսագրություն (CV-Curriculum Vitae).
 - դ. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը.
 - ե. գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը.
 - զ. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցուցակը.
 - է. պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալները. Համալսարանի ֆակուլտետի հնգամյա զարգացման ծրագիր (հայեցակարգ)՝ փակ և ստորագրված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո և տեղադրվում է ՎՊՀ պաշտոնական կայքէջում:

9. Դեկանի թեկնածուների անձնական գործը ՎՊՀ ռեկտորը մակագրում է ՎՊՀ գիտական խորհրդին առընթեր մրցույթային հանձնաժողովին:
Հանձնաժողովը փաստաթղթերի համապատասխանության մասին գրավոր կարծիքը ներկայացնում է ֆակուլտետի գիտական խորհրդին:

10. Այն դեպքում, երբ դեկանի թեկնածությունն առաջադրվում է պրոֆեսորադասախոսական կազմի անդամ(ներ)ի կողմից, ներկայացված փաստաթղթերի փաթեթը բացելուց հետո մրցույթային հանձնաժողովը թեկնածուին իրազեկում է առաջադրվելու մասին, և ստանում նրա գրավոր համաձայնությունը:

11. Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը ֆակուլտետի գիտական խորհրդի նիստից առնվազն 10 օր առաջ դեկանի պաշտոնի համար ներկայացված թեկնածուներին իրազեկում է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի մասին, և նրանց ցուցակը հրապարակում է Համալսարանի ինտերնետային կայքէջում:
Ցուցակը կազմվում է ըստ ըստ ազգանունների այբբենական հաջորդականության. նշվում է թեկնածու(ներ)ի ազգանուն-անունը, գիտական կոչումը, զբաղեցրած պաշտոնը, ինչպես նաև նրանց առաջադրած կառուցվածքային ստորաբաժանում(ներ)ը, ինքնաառաջարկման մասին տեղեկատվություն:

Դեկանի պաշտոնի թեկնածուները պետք է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին ներկայացնեն ֆակուլտետի առաջիկա հնգամյա գործունեության հայեցակարգը:

12. Դեկանի պաշտոնի համար առաջադրված թեկնածուները մինչև թեկնածուների մասին տեղեկությունները Համալսարանի կայքէջում պաշտոնապես տեղադրվելու օրը իրավունք ունեն ետ վերցնել ներկայացված փաստաթղթերը կամ ինքնաբացարկ հայտնել այդ մասին

գրավոր դիմում ներկայացնելով ռեկտորին:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ

ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

13. Ֆակուլտետի գիտական խորհրդի՝ Դեկանի ընտրության օրակարգով բաց նիստը վարում է դեկանը, իսկ դեկանի ընտրության համար ներկայացված թեկնածությունների թվում պաշտոնավարող դեկանի թեկնածության առկայության դեպքում՝ ֆակուլտետի գիտական խորհրդի տարիքով ավագ անդամը:

14. Դեկանի ընտրության օրակարգով ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը և/կամ պրոռեկտոր(ներ)ը:

15. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստն իրավագոր է ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

16. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող և քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե Գիտխորհուրդն այլ կարգ չի սահմանում:

17. Նախագահողը հարցի քննարկումը սկսում է թեկնածու(ներ)ի առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ:

18. Նախագահողը հրապարակում է ֆակուլտետի գիտական խորհրդի օրակարգը:
Նախագահողը ներկայացնում է թեկնածու(ներ)ին:

Գիտական խորհրդի նիստի օրակարգում դեկանի ընտրությունների հարցի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ հարցերը՝

1. Դեկանի պաշտոնի հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում.
2. Թեկնածու(ներ)ի հայեցակարգ(եր)ի ներկայացում.
3. Դեկանի պաշտոնի հավակնորդ(ներ)ին հարցերի ուղղում և գիտական խորհրդի անդամների ելույթներ.
4. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,
5. Դեկանի ընտրության նպատակով փակ, գաղտնի քվեարկություն.
6. Դեկանի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

19. Առաջադրման գործընթացում Ընթացակարգի էական խախտումներ ի հայտ գալու դեպքում ֆակուլտետի գիտական խորհուրդն իրավասու է հետաձգել նիստը մինչև ռեկտորի կողմից այդ հարցի կապակցությամբ որոշման ընդունումը:

20. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին դեկանի թեկնածու(ներ)ի ներկայությունը պարտադիր է:
21. Նախագահողը ծրագրային ելույթի համար, ըստ ցուցակի, ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուներին: Ելույթի տևողությունը սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը:
22. Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո Գիտխորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի կամ Գիտխորհրդի անդամ(ներ)ի առաջարկով՝ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:
Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը:
23. Քննարկման ժամանակ ելույթների տևողությունը սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետի գիտական խորհրդի համաձայնությամբ նախագահողը կարող է ավելացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:
24. Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:
25. Քննարկումների ավարտից հետո թեկնածու(ներ)ին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի տևողությունը սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

26. Քննարկման ավարտից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն-ազգանունները ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ գրանցվում են քվեաթերթիկում:

27. Նախագահողը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ, գաղտնի քվեարկության կարգը:

28. Նախագահողի առաջարկով փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ Գիտխորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ երեք հոգուց ոչ պակաս կենտ թվով: Դեկանի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ և քվեարկությանը չեն մասնակցում:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

29. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը և անունը, այդ տողի դիմաց իրար տակ՝ «կողմ» և «դեմ» բառերը, որոնցից յուրաքանչյուրի դիմաց՝ ազատ վանդակ (Հավելված 1): Հաշվիչ հանձնաժողովի անդամները նախօրոք ստորագում են բոլոր քվեաթերթիկների դարձերեսին (Հավելված 1.1, Հավելված 2.1):

Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշվեն թեկնածուների ազգանունը, անունը և վերջին տողում «բոլորին դեմ եմ» արտահայտությունը, յուրաքանչյուրի դիմաց՝ ազատ վանդակ (Հավելված 2):

30. ֆակուլտետի գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ ստորագրում է ֆակուլտետի գիտական խորհրդի անվանացանկում, վերցնում մեկ քվեաթերթիկ և քվեախցում կատարելով գաղտնի քվեարկություն՝ քվեաթերթիկը գցում քվեատուփի մեջ:

31. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 3):

32. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում քվեատուփի մոտ տրամադրվող գրիչով՝

ա) մեկ թեկնածուի քվեարկության դեպքում «կողմ» կամ «դեմ» բառերի դիմաց համապատասխան ազատ վանդակում կատարված է նշում [V] նշանի տեսքով.

բ) մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին, այսինքն՝ որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին քվեարկելու համապատասխան տողի ազատ վանդակում կատարված է նշում[V] նշանի տեսքով:

33. Քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

34. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը ձայների պարզ մեծամասնությամբ:

35. Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի մասնակիցների ձայների կեսից ավելին:

36. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արդյունքները:

Քվեաթերթիկները, ըստ թեկնածուների, տեղավորվում են առանձին ծրարների մեջ: Ծրարների վրա դրվում է կնիք, և հաշվիչ հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությունները:

37. Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում Գիտխորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

ա) ֆակուլտետի դեկան ընտրվելու մասին,

բ) կրկնակի քվեարկություն անցկացնելու

մասին,

գ) ընտրությունները չկայացած

ճանաչելու մասին:

դ) ընտրություններն անվավեր ճանաչելու

մասին

38. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից ֆակուլտետի գիտական խորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում ֆակուլտետի գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

ա) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները, կամ՝

բ) առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնքան ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները կամ՝

գ) հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

39. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է Ընթացակարգին համապատասխան:

Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը ստացած թեկնածուն:

40. Դեկանի ընտրությունները համարվում են չկայացած, եթե՝

ա) դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել ֆակուլտետի գիտական խորհրդի ներկա և քվեարկելու իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությունը,

բ) կրկնակի քվեարկության արդյունքում որևէ թեկնածու չի ստացել ֆակուլտետի գիտական խորհրդի ներկա և քվեարկելու իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

41. Դեկանի ընտրության գործընթացի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը Գիտխորհրդի նիստի արձանագրության հետ միասին հաջորդ աշխատանքային օրը նիստի քարտուղարի կողմից Համալսարանի ընդհանուր բաժնի միջոցով ներկայացվում են ռեկտորին:

42. Դեկանի ընտրությունները ճանաչվում են անվավեր, եթե՝ դեկանի ընտրության գործընթացում հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, Համալսարանի կանոնադրության, Համալսարանի ներքին իրավական ակտերի և սույն ընթացակարգի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքների վրա:

Դեկանի ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում ռեկտորն իրավասու է տասնօրյա ժամկետում ֆակուլտետի գիտական խորհրդում նշանակել կրկնակի քննարկում և վերաքվեարկություն:

43. Դեկանի ընտրությունների գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, Համալսարանի կանոնադրության,

Համալսարանի ներքին իրավական ակտերի և Ընթացակարգի խախտումներ չհայտնաբերվելու դեպքում Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ Համալսարանի գիտական քարտուղարը դեկանի ընտրության վերաբերյալ ֆակուլտետի գիտական խորհրդից ստացված բոլոր փաստաթղթերը այդ թվում նաև դեկանի թեկնածուի ներկայացրած լրամշակված կամ փոփոխված հայեցակարգը՝ կից կարծիքներով ներկայացնում է Համալսարանի գիտական խորհուրդ՝ հաստատման:

44. Մույն ընթացակարգով չնախատեսված ֆակուլտետի դեկանի ընտրությանը վերաբերող հարցերը կարգավորվում են առավել բարձր նորմատիվ իրավական ակտերով:

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

45. Ռեկտորն ընտրված թեկնածուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է ֆակուլտետի դեկանի պաշտոնում 5 տարի ժամկետով: Ռեկտորն ընտրված թեկնածուի հետ ընտրության մասին ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը Համալսարանի գիտական խորհրդում հաստատվելուց հետո կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է ֆակուլտետի դեկանի պաշտոնում 5 տարի ժամկետով

-

46. Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է դեկանի նոր ընտրություններ:

47. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ, դեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն, ընտրությունը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու, ինչպես նաև բացառիկ այլ դեպքերում) ռեկտորն իրավասու է մինչև 6 ամիս ժամկետով դեկանի պաշտոնում հրամանագրել Ընթացակարգի 4-րդ կետում նշված պահանջները բավարարող անձի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել դեկանի ընտրություններ:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի _____
ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում դեկանի փակ, գաղտնի
քվեարկության

1.	Թեկնածուի ազգանուն, անուն	կողմ	
		դեմ	

«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի
համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ԴԱՐՁԵՐԵՍ

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ			
	Հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն	Կարգավիճակը (Նախագահ, անդամ)	Ստորագրություն
1.			
2.			
3.			

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարանի

_____ ֆակուլտետի գիտական խորհրդի _____
նիստում դեկանի փակ, գաղտնի քվեարկության

h/h	ազգանուն, անուն	
1.	թեկնածուի ազգանուն, անուն	
2.	թեկնածուի ազգանուն, անուն	
3.	թեկնածուի ազգանուն, անուն	
4.	թեկնածուի ազգանուն, անուն	
5.	բոլորին դեմ եմ	

Որևէ թեկնածուի «կողմ» լինելու կամ «բոլորին դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ԴԱՐՁԵՐԵՍ

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ			
	Հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն	Կարգավիճակը (Նախագահ, անդամ)	Ստորագրություն
1.			
2.			
3.			

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվիչ հանձնաժողովի նիստի

« » « » 20 թ.

ք. Վանաձոր

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական

Համալսարանի ___ ֆակուլտետի գիտական խորհրդի ___ նիստում հետևյալ կազմով՝

1. _____

2. _____

3. _____

Ֆակուլտետի գիտական խորհրդի ___ անդամներից ներկա էին ___-ը:

Քվեարկվել է (են) _____ ֆակուլտետի դեկանի պաշտոն թեկնածությունը (ներք):

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի_

_____ անդամներ: Բաժանվել է

_____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____

քվեաթերթիկ: Քվեարկության

արդյունքներն են՝

թեկնածուի ազգանունը, անունը կողմ, դեմ,

անվավեր, թեկնածուի ազգանունը, անունը

կողմ, դեմ, անվավեր:

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ընտրվել է (չի ընտրվել) _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

Կամ՝

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում դեկանի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____

2. _____

3. _____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ _____